ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1840—60-ական թվականներ)

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Օսմանյան Թուրքիայում մամուլի գրաքննության սկզբնավորումը կապվում է պարբերական հրատարակությունների հասարակական բովանդակության զարգացման հետ։ Գրաքննությունը կոչված էր պետության կողմից իրականացնելու մամուլի պարունակած գաղափարների և ուղղության վերահսկողությունը, մամուլին պաշտոնական գաղափարախոսության պարտադրումը։ Այն հետամտում էր օրինապատշաճ հունի մեջ դնել կայսրության ժողովուրդների հրատարակչական գործը։ Մասնավորապես 1840—1850-ական թվականներին Բ. դուռը փորձում էր վերահսկել Թուրքիայում եվրոպացիների գրատպությունն ու մամուլը։ Դրանով էլ հակադրվում էր տերությունների տնտեսական-քաղաքական ճնշմանը ուղեկցող գաղափարական պրոպագանդային, որի նպատակն էր հիմնավորել կայսրության կախումն Արևմուտքից։ Այս ուղղությամբ թուրքական իշխանությունների առաջին քայլերը, սակայն, արդյունավետ չեղան, որովհետև իրավական արտոնություններ վայելող օտարերկրացիները պայքարում էին իրենց առանձնաշնորհումների համար և շրջանցում էին կառավարության տնօրինությունները։ Նրանք շարունակում էին օտար, ինչպես և տեղական լեզուներով գրքերի հրատարակությունը՝ տագնապ պատճառելով թուրքական իշխանություններին։ 1849—1852 թթ. Բ. դուռը դիմեց դեսպաններին՝ առանց կառավարության թույլտվության գիրք կամ գրքույկ չտպագրելու պահանջով[1]։ Այնուհանդերձ, կառավարությունը գրատպության գործը իր իրավասության տակ առավ ավելի ուշ՝ 1857 թ. փետրվարի 15-ին հրապարակված «Տպարանների մասին օրենքով»։ Այդ օրենքով օսմանյան և օտար հպատակներին պարտադրվում էր ստանալ թուրքական իշխանությունների թույլտվությունը՝ տպարան բացելու համար։ Սահմանվում էր գրքերի նախնական գրաքննություն[2]։ Պարբերական հրատարակությունները այդ օրենքով դեռևս չէին առանձնացվում տպագրական մյուս արտադրանքից։ 1858 թ. հուլիսի 25-ին հրապարակված օսմանյան քրեական օրենսգրքի 138-րդ հոդվածն արդեն տարածվում էր նաև պարբերականների վրա, պատիժներ էին սահմանվում այն անձանց համար, որոնք գիրք, թերթ կամ այլ գրվածքներ կտպագրեին տերության շահերի, կառավարության անդամների կամ հպատակ ազգերից որևէ մեկի դեմ։ Պատժով նախատեսվում էր նաև տպարանի մշտական խափանումը[3]։

Տպարանների վերաբերյալ օրենքից առաջ թուրքական կառավարությունը հայերեն գրքերի տպագրության վերահսկողությունը իրականացրել է Կ. Պոլսի պատրիարքի միջոցով։ Գրքերը տպագրվում էին պատրիարքի թույլտվությամբ՝ «Հրամանավ... պատրիարքին» վերտառությամբ, որը վկայում էր արևմտահայերի կրոնական պետի իրավասությունների մասին։ 1850-ական թվականներին պատրիարքն այս գործը վերապահել է Հոգևոր ժողովին[4]։ Գր. Օտյանը 1864 թ. սեպտեմբերին, հիշատակելով Ն. Ռուսինյանի դեմ արևմտահայ հետադիմության հալածանքները, գրում է. «Ասկե տասներկու տարի առաջ... «Ուղղախոսությունը» իբրև հերետիկոսություն պիտի պատժվեր և քիչ մնաց, որ վարչության ուժը բավեր՝ գիրքը տպող տպարանը գոցվեր և տպագրիչը բանտարկվեր»[5]։ Ակներև է, որ պատրիարքի և Հոգևոր ժողովի գրաքննչական ձեռնարկները սոսկ պատրիարքարանի պատերի ներսում չեն նախաձեռնվել։ Տպագրական գործի վերահսկողությունը կղերի ձեռքին կենտրոնացնելու ուղղությամբ արվող միջոցառումների հա-

---

1 А. Д. Желтяков, Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729—1908), М., 1972, с. 65; «Նոյյան աղավնի», 1. V. 1852։

2 S. R. Iskit, Türkiyede matbuat rejimleri, Ankara. 1938, s. 10—11.

3 «Մասիս», 8. V. 1865։

4 «Հանդես ամսօրյա», 1902, № 5, էջ 143։

5 «Մասիս», 3. X. 1864։

մագրումը նույն ժամանակաշրջանում կառավարության գործողություններին ցույց է տալիս, որ գրաքննությունը կայսրության մասշտաբներով կիրառելուց առաջ Բ. դուռը նույնիմաստ հրահանգներ էր տվել համայնքների հոգևոր գլուխներին։

«Տպարանների մասին» օրենքով պարբերական հրատարակությունների համար նախնական գրաքննություն չհաստատվելը հիմք է տալիս եզրակացնելու հետևյալը. կառավարությունը տեղական մամուլը դեռևս չէր համարում հատուկ որոշակիություն ունեցող ոռաղափարախոսական ամբիոն, ուստի, այն առայժմ դուրս էր մնում նրա քաղաքական ու գաղափարական մտահոգությունների տեսադաշտից։ Ըստ «Նոյյան աղավնու», 1852 թ. երկրում տպագրվում էր ընդամենը 34 պարբերական, որոնցից 13-ը՝ Կ. Պոլսում, 5-ը Զմյուռնիայում, 3-ը՝ Եգիպտոսում, 8-ը՝ Սերբիայում, 4-ը՝ Վալախիայում և Մոլդավիայում, 1-ը՝ Նիկոմիդիայում։ Քանակով ամենաշատը ֆրանսերեն թերթերն էին (8), ապա՝ հայերենը (5)[6]։ Այս շրջանից հայտնի են երկու թուրքերեն թերթ՝ «Թագվիմ-ի վագային» և «Ջերիդե-ի հավադիսը»[7]. առաջինը պաշտոնաթերթ էր, իսկ երկրորդը հրատարակվում էր սուլթանական իրադեով, ինչը բացառում էր և՛ մեկի, և՛ մյուսի քաղաքական անբարեհուսությունը։ Այսուհանդերձ, մինչև մամուլի վերաբերյալ օրենքի հաստատումը (1864 թ.) իշխանությունները վերահսկողություն են իրականացրել պարբերականների վրա։ 1840—1850-ական թվականներին թուրքերեն և հպատակ ժողովուրդների լեզուներով թերթերը հրատարակվում էին լուսավորության տեսչի և մեծ վեզիրի թույլտվությամբ ու սուլթանական ֆիրմանով։ Գավառներում հրատարակության թույլտվությունը տալիս էր վալին՝ դարձյալ լուսավորության տեսչի հաստատումով[8]։ 1857 թ. տպարանների վերաբերյալ օրենքը լրացվեց նույն տարվա սեպտեմբերի հրահանգով, որն արգելում էր որևէ բան տպագրել առանց դատաքննության ատյանի արտոնության[9]։ Դժվար է եղել, մասնավորապես, գավառներում պարբերական հրատարակելու թույլտվություն ստանալը, որն, ի դեպ, սուլթան Համիդի օրոք դարձավ բացառություն չենթադրող ուղեգիծ։ Այս իմաստով հատկանշական է Զմյուռնիայի «Մաղիկի» նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը։ 1863 թ. մարտին «Մաղիկի» խափանվելու առթիվ Զմյուռնիայի ֆրանսերեն «Իմպարտիալ» թերթը հայտնում էր, որ պատճառը «Մաղիկի» հրատարակության ֆիրման չունենալն է։ Մինչդեռ «Մեղուն» պնդում էր, որ «Մաղիկը» հրատարակության արտոնագիրը «կառավարությունեն երկու տարի է, որ ընդունած է»[10]։ Նույն թվականի նոյեմբերին վերահրատարակված հանդեսի խմբագիր Գր. Զիլինկիրյանը հայտնում է, որ ազգային վարչությունը պաշտոնապես հրատարակության արտոնագիր է խնդրել Բ. դռնից, որ և տրվել է իրեն[11]։ Պարզվում է, որ «Մաղիկի» հրատարակությունից առաջ Գր. Զիլինկիրյանին տրվել է հանդեսը Կ. Պոլսում հրատարակելու արտոնություն (խմբագիրը, ինչպես տեսնում ենք, այն ժամանակ չի հաղթահարել գավառում՝ Զմյուռնիայում, հանդեսը հրատարակելու հետ կապված դժվարությունները), որ նա ժամանակավորապես գործի է դրել հայրենի քաղաքում։ Եվ միայն 1863 թ. հանդեսի խափանումից հետո Բ. Քրիկյանի, Գր. Օտյանի և Հ. Սարաֆյանի օգնությամբ «Մաղիկի» արտոնագիրը փոխանցվել է Զմյուռնիայի վրա[12]։ Արևմտահայ խմբագիրներից Ստ. Փափազյանը նկատում էր, որ «Նոր հանդես կամ օրագիր հրատարակելու արտոնություն չկա, կամ թե առնելը խիստ դժվարին է. ասոր փորձը մեզմե ետև շատերն ըրին...»[13]։

Եթե նկատի ունենանք, որ 1840—1850-ական թվականներին հրատարակված թուրքական հիշյալ թերթերը վայելել են կառավարության բարեհաճությունը, իսկ օտարահպատակների մասուլը օգտվել է որոշակի առանձնաշնորհումներից, ապա ակնհայտ է դառնում, որ իշխանությունները այս շրջանում առանձնապես հետևել են ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում և արևմտահայերի մամուլին։ Մամուլի գործը կարգավորվել է ոչ միայն բանավոր, այլև գրավոր հրահանգների ուժով։ Այսպես, երկու ամիս խափանվելուց հետո, 1861 թ. նոյեմբերին վերահրատարակվելով, «Մեղուն» գրում էր. «Մեղուն» այսօր նոքեն երևան կելնե բարձրագույն հրա-

---

6 «Նոյյան աղավնի», 1. XI. 1852։

7 H. R. Ertug, Basın ve yayın hareketleri tarihi, İstanbul, 1960, s. 139, 150.

8 E. Z. Karal, Osmanlı tarihi, c. VII. Ankara, 1956, s. 217.

9 «Մուսայք Մասյաց», 5. X. 1857։

10 «Մեղու», 1863, № 193, էջ 85։

11 «Մաղիկ», 1863, № 63, էջ 2։

12 Նույն տեղում, էջ 3։

13 «Ժամանակ», 1863, № 23, էջ 184։

մանավ։ Սույն հրամանը մեզի հաղորդող պաշտոնական նամակը կհիշեցնե Պոլիս տպվող ամեն ազգի և ամեն լեզուե օրագիրներուն տրված պատվերը՝ ազգային ներկա գործոց վրա բացարձակ լռություն պահելու»[14]։ Հրահանգներ են տրվել նաև որոշակի հարցի վերաբերյալ. Նույն «Մեղուն» 1861 թ. նոյեմբերին տպագրել է իրեն ուղղված՝ իշխանությունների նախազգուշացում, որով արգելվում էր տպագրել Նիկոմիդիայի կղերին քննադատող նամակները[15]։ Ուշագրավ է 1863 թ. հունվարին մամուլի դիվանի մի ազդը. այստեղ հայտնվում է, որ արգելվելու են այն բանավեճերը, «որոնք լրագրության վրա հաստատված կանոնադրության սահմաններուն մեջ հանվելիք ընդհանուր շահուն վերաբերյալ խնդիրներու համար չըլլալով՝ անձնականին հետ առնչական մասնավոր իրողություններու կվերաբերին»[16] (ընդգծումը մերն է—Ա. Խ.)։ Ի՞նչ «լրագրության վրա հաստատված» կանոնադրության մասին է խոսքը։ Հայտնի է, որ օսմանյան լրագրական առաջին կանոնադրությունը (օրենքը) հրապարակվել է 1864 թ. դեկտեմբերի 31-ին, նշված ազդից մոտ երկու տարի հետո։ Պետք է կարծել, որ եղել են բանավոր «կանոններ», որոնցով առաջնորդվել են մամուլի վերահսկողությունը ուժեղացնելու նպատակով 1862 թ. ստեղծված լրագրության դիվանի աշխատակիցները և ոստիկանությունը։ Այդ կանոնները բավականաչափ սահմանափակել են պարբերականների ինքնուրույնությունը՝ նպատակ ունենալով մամուլը պահել պաշտոնական գաղափարախոսության ընդունելի շրջանակների մեջ։ Մամուլը ենթարկվել է նաև որոշակի «կանոնի»՝ մեկ տարվա ընթացքում երեք նախազգուշացում ստացած ամեն մի պարբերական ենթակա էր խափանման։ Սակայն իշխանությունները իրենք են ոտնահարել այդ «կանոնը»։ 1863 թ. մարտին միայն մեկ նախազգուշացում ստանալուց հետո խափանվեց «Մեղուն»։ Նույնիսկ պահպանողական «Արշալույս արարատյանն» էր նկատում հանդեսի նկատմամբ կիրառված այդ արտաքո կարգի խստությունը[17]։

Մամուլի դեմ գործադրված ոստիկանական կամայականությունների ու բռնությունների մըշտական փաստերի մասին էր վկայում Կ. Պոլսի «Կուրիեր դ'Օրիեն» ֆրանսերեն թերթը։ Հանգամանորեն քննարկելով 1864 թ. մամուլի վերաբերյալ օրենքը, այդ թերթը գրում էր, թե «լրագիրներն, որք մինչև ցարդ կապված էին, այսուհետև ալ վարդե անկողնի մը վրա պառկած չպիտի ըլլան»[18]։ Նույն օրենքի կապակցությամբ «Մասիսը» հիշում էր «մինչև ցարդ լրագրության վրա դրված խիստ կանոնաց» առկայությունը[19]։ Մամուլի թուրք պատմաբանները ևս որոշակի տեղեկություններ են հաղորդում 1840—50-ական թվականների գրաքննական բարքերի մասին, ցույց տալով, որ կառավարությունը շարունակ ճնշում էր պարբերականները (ընդհուպ մինչև տևական խափանումները)[20]։ Ցանկացած դեպքում իշխանությունները կիրառել են նաև խիստ գրաքննություն (նախնական կամ ետտպագրական)՝ ուշադիր հետևելով արևմտահայ մամուլի բովանդակությանը։ Այսպես, 1857 թ. հոկտեմբերին Ա. Հայկունու «Մուսայք Մասյացը» ենթարկվել է ետտպագրական գրաքննության։ Պարբերականի 2-րդ համարում, որ հրատարակվել է առաջին համարից մեկ ամիս անց, խմբագիրը գրում է. «Մեր շաբաթաթերթին մեջ պարունակած նյութը երեք-չորս շաբաթե ի վեր քննության տակ ըլլալով՝ ստիպվեցանք անոր հրատարակումը քանի մը շաբաթ դադարեցնելու»[21]։

Զմյուռնիայի իշխանությունները նախնական գրաքննություն են սահմանել «Ծաղիկի» նկատմամբ, մանավանդ այն ժամանակ, երբ ազգային հետադիմությունը մատնացույց է արել նրա «անբարեհույս» ընթացքը։ 1864 թ. «Մասիսը» «Կուրիեր դ'Օրիենից» արտատպել է մի զմյուռնացու նամակը «Ծաղիկը» նախնական գրաքննության ենթարկելու մասին։ Բացահայտվում են գրաքննիչ Պողոս էֆենտու կամայական գործողությունները պարբերականի նկատմամբ[22]։

Օսմանյան իշխանությունների կողմից հայ մամուլի և ընդհանրապես երկրում հրատարակվող մամուլի դեմ պատժիչ միջոցառումների երկար շարքը սկսվում է Զմյուռնիայի «Հայրենա-

---

14 «Մեղու», 1861, № 44, էջ 101։

15 Նույն տեղում, № 146, էջ 217։

16 «Մասիս», 2. II. 1863։

17 «Արշալույս արարատյան», 23. III. 1863։

18 «Մասիս», 16. I. 1865։

19 Նույն տեղում, 26. XII. 1864։

20 H. R. Ertug, Basın ve yayın hareketleri tarihi Ikinci bası, Istanbul, 1959, s. 181.

21 «Մուսայք Մասյաց», 5. 10. 1857։

22 «Մասիս», 11. 2. 1864։

տեր» թերթի (խմբագիր՝ Խ. Մելիքսեթումյան) խափանումով։ Ընդ որում, թերթը խափանվել է երկու անգամ՝ 1843 թ. օգոստոսին և նույն թվականի հոկտեմբերից մինչև 1844 թ. ապրիլ։ Պատճառը իշխանություններին ուղղված տեղի բուրժուաառևտրական ազդեցիկ խմբակցության բողոքն էր համայնքի հասարակական անդորրը «վրդովող» պարբերականի դեմ։

Զմյուռնիայում տեղական իշխանությունների և ազգային հետադիմության հաշորդ զոհը դարձավ «Միություն» դեմոկրատական պարբերականը։ Հալածանքի պատճառները, ինչպես ցույց էր տալիս Հ. Սրվաձյանը, «Միության» էջերում տեղական չոչերի կամայականության դատապարտումն էր, ժողովրդական խավերի իրավունքների պաշտպանությունը[23]։ Խափանման իրավական հիմք դարձավ «Միության» առանց արտոնագրի հրատարակվելը։ Խմբագիրները բանտարկվեցին տերության դեմ գրելու ամբաստանությամբ։ Նրանք ազատ արձակվեցին այն բանից հետո, երբ իրենց տպագրած հոդվածները ներկայացրին իշխանություններին[24]։ Այդ միջադեպի պատճառով փակվեց նաև Տետեյան տպարանը, որտեղ տպագրվում էր «Միությունը»[25]։

Օսմանյան գրաքննության անհանդուրժողականությունը ծավալվում էր արևմտահայերի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության զարգացմանը համընթաց։ Որքան ավելի որակական որոշություն էր ձեռք բերում այդ պրոցեսը, այնքան ավելի դաժան, մանրախնդիր ու անհեթեթ էր դառնում գրաքննությունը։ Այդ ուղեգիծը վայրագության էր հասնում այն ժամանակ, երբ կասկածի էր ենթարկվում լրագրության քաղաքական բարեհուսությունը։ Քաղաքական մեղադրանքի մոտիվներով առաջնորդվեց ոստիկանությունը, երբ 1862 թ. օգոստոսին հաշվեհարդար տեսավ Կ. Փանոսյանի հայատառ թուրքերեն «Մյունատիի էրճիաս» («Արգեոսի մունետիկ») թերթի հետ։ Դեմոկրատական այս պարբերականը սահմանադրական գաղափարների պաշտպանությունը զուգորդել է աշխարհիկ ու կղերական հարստահարիչների, կրոնական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի հետ, պաշտպանել արևմտահայ հասարակ ժողովրդի իրավունքները։ Ա. Ալպոյաճյանը ընդգծում է նրա խմբագրի սկզբունքային բանակռիվը Կեսարիայի (Կ. Փանոսյանի ծննդավայրի) «մեծ ազաներու» դեմ, ինչպես և այն, որ նրա թերթը խթանել է ժողովրդի՝ «ազատ խոսելու, անկաշկանդ շարժվելու բնական միտումը... իր ունեցած ազատ իրավունքներու գիտակցությունը»[26]։ Սատարելով Զեյթունի ապստամբած լեռնականներին, Կ. Փանոսյանը նրանց դեմ արշավող թուրքական զորքերի հրամանատար Ազիզ փաշային անվանել էր «փարավոնական բարբարոս»[27], պաշտպանել զեյթունցիների արդար դատը։ Թուրքական իշխանությունները չհանդուրժեցին այդ ելույթը։ Կ. Փանոսյանը ձերբակալվեց և բանտում անցկացրեց 1862 թ. օգոստոսի վերջից մինչև սեպտեմբերի 2-րդ տասնօրյակը։ «Մյունատիի էրճիասը» ընդմիշտ խափանվեց[28]։ Դա Թուրքիայում հրատարակվող մամուլի պատմության մեջ երկրորդ դեպքն էր, երբ խմբագիրը բանտ էր նետվում քաղաքական մեղադրանքով («Միությունից» հետո)։

Մինչ այդ, Կ. Պոլսի ազգային վարչությունը փորձեց բռնանալ ազատախոս մամուլի վրա, կասեցնել նրա քննադատությունը հետադիմության դեմ։ Ազգային ժողովը 1861 թ. մայիսին հատուկ քննության առավ այդ հարցը և որոշեց պատրաստել՝ ազգային մամուլի կանոնադրություն։ Ստեղծվեց օրինագիծ մշակող հանձնաժողով, որի կազմի մեջ մտան Ն. Վարժապետյանը, Սամաթիո տեր-Արիստակես քահանան, Սերվիչենը, Ստ. Ասլանյանը, Գր. Աղաթոնը, Գր. Օտյանը և Առ. Տատյանը[29]։ 1863 թ. սահմանադրությունը տերության կողմից վավերացվելուց մի քանի ամիս անց տպագրական օրինագիծը արդեն պատրաստ էր։ Այն կազմված էր ընդարձակ առաջաբանից և 14 հոդվածներից։ Սերվիչենը գործուն գեր էր ունեցել օրինագիծը կազմելու կամ վերջնականապես խմբագրելու մեջ։ Օրինագծով խիստ սահմանափակվում էր մամուլի ազատությունը։ Ազգային վարչությանն ուղղված մամուլի քննադատությունը ցանկացած պահին կարելի էր որակել իբրև նախատինք և աններելի հանդգնություն։ Թեև առաջաբանում դրվատվում էր

---

23 «Մեղու», 1861, № 122, էջ 11։

24 Նույն տեղում, էջ 10։

25 Գ ր. Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն, Պատմություն հայ լրագրության 1860-են մինչև մեր օրերը («Հանդես ամսօրյա», 1897, № 2, էջ 35—36)։

26 Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, Պատմություն հայ Կեսարիո, հ. Ա, Կահիրե, 1937, էջ 1101։

27 Ա. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, հ. 1, էջ 386։

28 «Մասիս», 25. VIII. 1862, 11. IX. 1862։

29 «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1860—1870, էջ 64։

«կարծյաց աղատ քննությունը», սակայն հետագա բազմաթիվ վերապահումներով մամուլը դրբվում էր վարչության տնօրինության ներքո։ Դատապարտվում էր անստորագիր նյութերի հրապարակումը, արգելվում էին կրոնը, սահմանադրությունը և ազգային վարչությունը «նախատելը», ազգային պաշտոնակալների «պատվույն դպչելը», պատրիարքների, առաջնորդների, կրոնական ու քաղաքական ժողովների անդամների դեմ «թշնամանքը» և «խռովություն հարուցանելու դրվածքները» (հոդվ. 3—7)։ Տպագրական հանցանքների համար սահմանվում էին պատիժներ՝ դատապարտության վճռի հրապարակում, տուգանք (100—500 ղուրուշի չափով), ժամանակավոր խափանումից (երկու շաբաթից մինչև երեք ամիս) մինչև մշտական դադարեցում (հոդվ. 12)։ Ընդգծվում էր տպագրական օրինագծի բխելը օսմանյան օրենքներից, ինչպես և տպագրական հանձնաժողովի կախումը իշխանություններից (հոդվ. 1, 13—14)[30]։

Այսպիսով, օրինագծի հաստատման դեպքում արևմտահայ մամուլը ընկնելու էր կրկնակի ծանր պրաչնության ներքո, եթե հաշվի առնենք նաև գրաքննչական պաշտոն ստանձնած իշխանությունների խիստ հսկողությունը։ Նախագծի այս հետադիմական բովանդակության մասին Մ. Նալբանդյանը գրում էր. «Այնուհետև, մի կողմ թողած սահմանադրական գործը, այդ քննիչ ժողովի (հանձնաժողովի—Ա. Խ.) առաջին տնօրենությունն եղավ հայկական խոսքը ճնշել, տպագրության ազատությունը բռնարարել։ Պ. Սերվիչենը կամակից էր այս բանին, և մեք առ ի սրտե ցավում ենք, որովհետև նորան ճանաչում ենք ստուգապես ազգասեր և ստուգապես մի հարգելի մարդ»[31]։

Օրինագծի հաստատումը, սակայն, ձգձգվում էր։ Երեսփոխանների զգալի մասը դեմ էր դրան, ուստի, հետադիմական վարչությունը դիմեց բռնի միջոցների։ 1863 թ. հոկտեմբերի 25-ին քաղաքական ժողովի նիստին հրավիրվեցին «Մեղվի», «Մասիսի», «Կիլիկիայի» և մի քանի այլ թերթերի խմբագիրները։ Նրանց հայտնվեց, որ մինչև նախագծի հաստատումը պետք է ենթարկվեն մի քանի հրահանգների, այն է՝ «Ա. Կրոնքի դեմ չգրել։ Բ. Սահմանադրության դեմ չգրել։ Գ. Մոգային վարչության ըրածին և ընելիքներուն վրա բան մը չգրել։ Դ. Անձնականության չդպչիլ»[32]։ Հրահանգներին ընդդիմացան «Մեղվի» և «Ջնփյուռի» խմբագիրները։ «Մեղուն» իր դիրքորոշումը հայտնեց «Խմբագրական օրենք» հոդվածում, որտեղ դատապարտում էր տպագրական օրինագիծը, իսկ հրահանգները բնութագրում որպես «անարդար և բռնական» միջոցառումներ, որոնք հակասում են սահմանադրության ոգուն[33]։ Ազգային վարչությունը թշնամաբար ընկալեց այս ելույթը։ Պատրիարքը դիմեց ոստիկանությանը՝ «Մեղուն» պատժելու խնդրանքով։ Պարբերականը խափանվեց 1863 թ. նոյեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 3-ը։

Հետադիմական օրինագիծը և խմբագիրների դեմ ուղղված վարչության բռնի գործողությունները խիստ քննադատության ենթարկեցին Հ. Սրվանձյանը, Ա. Մուրատյանը, Գր. Չիլինկիրյանը, Մ. Մամուրյանը, Կ. Փանոսյանը և ուրիշներ։ Տպագիր խոսքի դեմոկրատական սկզբունքները պաշտպանեց Մ. Նալբանդյանը՝ «Ազգային թշվառություն» հոդվածով։ Այդ հոդվածը 1860-ական թվականներին արևմտահայ սահմանադրական պայքարի հանրագումարի վերլուծությունն է, ներհակ հասարակական հոսանքների արժեքավորումը, որն ամբողջացնելիս Մ. Նալբանդյանը խիստ կարևոր նշանակություն էր տալիս պարբերական մամուլի, գրատպության ազատությանը։ Տպագիր խոսքի այսպիսի սկզբունքային պաշտպանությունը, անկասկած, իր ազդեցությունն է թողել երեսփոխանների նշանակալի մասի վրա, որոնք մերժել են օրինագիծը։ 1863 թ. նոյեմբերին պարզ դարձավ, որ այն չի հաստատվելու։ Նախ հրաժարվեցին օրենսդիր հանձնաժողովի մի քանի անդամներ, այդ թվում՝ Գր. Օտյանը և Սերվիչենը։ Նրանք իրենց հրաժարականը պատճառաբանում էին օրինագծի արդեն պատրաստ լինելով[34]։ Մինչդեռ երեսփոխանական ժողովում շարունակվում էին բորբոքվել կրքերը. դեկտեմբերի 6-ի նիստում բուռն վիճաբանություններից հետո, «խնդիրն անորոշ կերպարանքի մեջ՝ երեսփոխանները ցրվեցան»,— գրում էր «Ժամանակը»[35]։ Արևմտահայ հասարակական հոսանքների միջև մամուլի ազատության, գրա սահմանների վերաբերյալ բանավեճը հետզհետե դուրս եկավ այդ խնդրի շրջանակներից և վերածվեց ընդհանրապես բարոյականության, կարծիքի ու խղճի ազատության շուրջ մղվող բանավեճի։

---

30 «Ժամանակ», 1863, № 23, էջ 179։

31 Մ. Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, Երևան, 1973, էջ 427։

32 «Մեղու», 1863, № 122, էջ 314։

33 «Մեղու», 1863, № 222, էջ 312—315։

34 «Ժամանակ», 1863, № 24, էջ 189։

35 Նույն տեղում, № 25, էջ 204։

Դր. Օտյանի և Սերվիչենի հրաժարականը չի կարելի բացատրել սոսկ օրինագծի հակառակորդների բուռն ընդդիմությամբ։ Իրականում օսմանյան կառավարությունն արդեն ձեռնամուխ էր եղել տպագրական օրենքի ստեղծմանը և այս պայմաններում Բ. դուռը չէր կարող հանդուրժել զուտ արևմտահայ մամուլի համար նախատեսված կանոնադրությունը։ 1864 թ. դեկտեմբերի 31-ին կառավարությունը հրապարակեց մամուլի վերաբերյալ օրենքը, որը հաջորդ տարվա սկզբից մտավ գործողության մեջ։ Սուլթանական բռնակալությունը այդ օրենքով ձգտում էր պարդավորել մամուլի կախումը իշխանություններից, չափավորել ու կասեցնել և՛ թուրքական մամուլի ընդդիմադիր տրամադրությունները, և՛ ընկճված ժողովուրդների հասարակական մտքի ու ազատագրական շարժման գաղափարախոսության արթնացումը։ Եթե թուրքական օպոզիցիոն մամուլի մեջ սուլթանական ռեժիմը տեսնում էր երկրի հասարակական վերակառուցմանն ուղղված վտանգավոր գաղափարներ, ապա ի դեմս հպատակ ժողովուրդների մամուլի՝ կայսրության ամբողջականությանը սպառնացող ազգային ինքնորոշման ձգտումները։ Իր մահվանից առաջ գրած հիշատակագրում Ֆուատ փաշան տագնապալի մտքեր էր հայտնել արևմտահայերի ազգային շարժման վերաբերյալ, և այդ մտքերը, ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, ծնվել էին սահմանադրական վեճերի, Զեյթունի ապստամբության և այլնի պատճառով։ «Ներքին գործերու մեջ,— գրում էր փաշան,— մեր բոլոր շանքը միայն մեկ նպատակի մը ձգտելու է՝ զանազան ցեղերու ի մի ձուլումը... Գարատաղ մը, սերպ իշխանություն մը, Հայաստանի թագավորություն մը իրենց և աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելե ի զատ՝ առավել կամ նվազ ցնորական երազներ են, մարդկային հին բաժանումներու դժբախտ մնացորդներ...»[36]։ Այս նույն ժամանակաշրջանի մյուս քաղաքագետը՝ Ալի փաշան ևս իր կտակում Արդուլ Ազիզին խորհուրդ էր տալիս վերացնել միլեթների (առանձին կրոնական համայնքներ) վարչական սահմանադրությունները։ 1867 թ. նոյեմբերին Կրետեից ուղարկած իր մի հուշագրում ևս նա պնդում էր, որ օսմանյան բոլոր հպատակների միաձուլումը Թուրքիայի առաջընթացի միակ ուղին է[37]։ Ակներև է, որ բռնակալության հարվածն ուղղվելու էր արևմտահայերի սահմանադրության, այլև այն սատարող հասարակական առաջավոր մտքի ու մամուլի վրա։ Այսուհանդերձ, 1864 թ. Ալի փաշան դեռևս հույս ուներ երկրում գաղափարական հայտ ներկայացնող հրատարակությունների զարգացումը կանխել վերահսկող օրենքների համակարգով, շրջանցելով նախնական գրաքննությունը։ Հրապարակելով մամուլի վերաբերյալ օրենք՝ առանց նախնական գրաքննական օրենքի կամ նախնական գրաքննության, օսմանյան իշխանությունները, մյուս կողմից, սերմանում էին լիբերալ-ռեֆորմիստական պատրանքներ՝ իրականում ամուր բռնելով մամուլի սանձը։

Մամուլի օսմանյան օրենքը կազմվել էր Նապոլեոն II-ի 1852 թ. համապատասխան օրենքի[38] 1. ֆրանսիական ավելի վաղ՝ 1819, 1828 թթ. օրենքների լայն օգտագործմամբ[39]։ Այն կազմված էր երկու մասից՝ «Ընդհանուր տրամադրություններ» (9 հոդված) և «Պատժական տրա-

---

[36] Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 1108։

[37] R. Davison, The question of Ali paşa's Political Testament („International Journal of Middle East studies", 1980, vol. 11, № 2, pp. 210—211).

[38] H. R. Ertug, Նշվ. աշխ., էջ 181, R. Balkanlı, Kanunlarımız bakımından matbuat, hürriyeti..., Ankara, 1951, s. 23.

[39] Օսմանյան մամուլի օրենքը, որ քննության է առնված Ա. Զիվելեգյանի ուշագրավ աշխատության մեջ (տե՛ս A. Dyivelegulan, La regime de la presse en Turquie, Paris, 1912), սերտ առնչություններ ունի ֆրանսիական մամուլի օրենքների հետ։ Այսպես, օսմանյան օրենքի 4-րդ հոդվածը՝ հրատարակության հայտի մեջ պարբերականի պատասխանատու տնօրենի անունը պարտադիր կարգով նշելու մասին, համապատասխանում է 1819 թ. հունիսի 9-ի ֆրանսիական համանշանակ օրենքին։ Եթե ֆրանսիական՝ 1828 թ. հուլիսի 18-ի օրենքով ենթադրվում էին թերթերի ու հանդեսների վարչական ու դատաստանական խափանումները, ապա օսմանյան օրենքով դատաստանական կարգով խափանումը հասցվում էր նվազագույնի՝ ի հակադրություն վարչական խափանումների լայն կիրառության։ 1849 թ. հուլիսի 27-ի ֆրանսիական օրենքով պատիժ էր սահմանվում այն դեպքում, երբ կեղծ լուրի տպագրությունը դիտվում էր իբրև հասարակական կարգի դեմ ուղղված սպառնալիք։ Օսմանյան համապատասխան օրենքը պատիժ էր ամրագրում առանց նման վերապահության՝ ընդհանրապես դիտավորյալ և չարամտությամբ կեղծ լուրերի ու խարդախված հրապարակումների համար (նույն տեղում, էջ 26—32)։ Օսմանյան օրենքի 26-րդ հոդվածով այս սանկցիան իր հերթին անսահմանափակ ազատություն էր տալիս ոստիկանությանը՝ մամուլի հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Թուցիկ

մարդություններ» (26 հոդված)[40]։ Նախնական գրաքննություն չէր սահմանվում, բայց թերթը կամ հանդեսը հրատարակելիս (տպագրվելուց հետո) տիրոջ կամ պատասխանատու տնօրենի ստորագրությամբ մեկ օրինակ պետք է ուղարկվեր Կ. Պոլսի մամուլի դիվան, գավառներում՝ վալիին (հոդվ. 4)։ Օրենքի առաջին մասով կարգավորվում էին պարբերականների հրատարակության պայմանների հետ կապված (արտոնություն, իշխանությունների և հրատարակիչ-խմբագիրների փոխհարաբերություններ և այլն) իրավական հարաբերություններ։ Պատժական մասում նշվում էին ենթադրվող հանցանքները և դրանց պատժաչափերը (խմբագիր-հրատարակիչների ամենատևական ժամկետով բանտարկությունը հասնում էր երեք տարվա, իսկ դրամական համարժեք տուգանքները՝ կեսից մինչև 100 լիրայի)։ Հանցանքի կրկնության դեպքում դատաստանական կամ վարչական միջոցով պատիժը կարող էր կրկնապատկվել (հոդվ. 33)։ Ամենախիստ հանցանքների՝ երկրի «ներքին խաղաղության ու ապահովության», «հասարակաց բարոյականի», սուլթանի կամ նրա գերդաստանի, պետական մարմինների ու պաշտոնական անձանց, դեսպանների դեմ մեղանչած պարբերականներին դատելու էր հատուկ հանձնաժողովը, իսկ մյուս հոդվածներով նշված օրինազանցություններն ու հանցանքները՝ ոստիկանական ատյանը (հոդվ. 34)։ Ստացվում էր, որ ոստիկանական ատյանի իրավասությանը ենթակա յուրաքանչյուր պարբերական կարող էր խափանվել հենց ոստիկանության ձեռքով։ Դրանով մամուլը նշանակալի չափով հանձնվում էր իշխանությունների տնօրինությանը։ Աչքի էր ընկնում այն հակասությունը, որ օրենքն ամբողջովին ընդգրկում էր հանցանքների դեմ կիրառվելիք պատիժները, մինչդեռ բացարձակապես շրջանցում էր լրագրողների ապահովության երաշխիքները, այդ թվում և բողոքարկման իրավունքը[41]։

Այն, որ մամուլի օրենքը ոչ մի արժեք չէր ներկայացնում ոստիկանական բռնությունների համար, մերկապարանոց ի հայտ եկավ «Ծաղիկ» հանդեսը պատժելու օրինակով։ Այս պարբերականը տպագրել էր «Ժեռն Ժաններու պարահանդեսը» ֆելիետոնը, որտեղ դատապարտվում էին վերնախավի քաղքենիական բարքերը։ Ֆելիետոնում չկար և ոչ մի կոնկրետ անուն, գործողության վայր, որվագծված էին միայն ընդհանրացված անձինք, բայց զմյուռնահայ երևելիներն այստեղ տեսան իրենց սեփական արտացոլումը։ Սրանց բողոքով «Ծաղիկի» խմբագիր Գր. Զիլինկիրյանը 28 օրով բանտ նետվեց, բայց ազատվեց ժամկետից շուտ՝ այնտեղ մնալով 1865 թ. մարտի 20—25-ը[42]։ Դատարանի դեր ստանձնած Զմյուռնիայի նախագահական ժողովը (մեջլիսի քելիր) փաստորեն ոչ մի իրավական հիմք չուներ մեղադրելու հրապարակախոսին, առավել ևս՝ դատապարտելու նրան։ Ոստիկանական հաշվեհարդարի ավանդույթը ավելի ուժեղ դուրս եկավ, քան մամուլի վերաբերյալ օրենքը։ Իրավական այդ նորաթուխ ակտը տալիս էր իր անգործունակության ապացույցը, ինչպես թանզիմաթի շրջանի այն բոլոր օրենքները, որոնք վերաբերում էին օսմանյան հպատակների քաղաքացիական իրավահավասարությանն ու իրավունքներին։

Իր ձևական ամբողջ նշանակությամբ մամուլի օրենքը, այնուամենայնիվ, կաշկանդում էր վարչական իշխանությունների գործողությունները։ Բռնապետությունը չէր գոհացնում դրա հոդվածներով ենթադրվող դատաստանական կարգը[43]։ Բ. դուռը այդպիսի թողտվությունը հանդուրժեց այնքան ժամանակ, քանի դեռ չէին ակտիվացել «նոր օսմանների» հրատարակությունները։ Եվ երբ 1867 թ. սկզբին «Մուհբիրն» ու «Թասվիրի էֆքյարը» քննադատեցին արտաքին փոխառությունները, բանակի գործողությունները Բելգրադի մոտ և ապա՝ Կրետեի գործերին եվրոպացիների միջամտությունը, երկուսն էլ խափանվեցին[44]։ Մամուլի դեմ Ալի փաշան հարձակման անցավ նրա իրավական վիճակի վերանայման վճռով։ 1867 թ. մարտի 6-ին նա հրապա-

---

համեմատությունն իսկ ցույց է տալիս, որ մամուլը իշխանությունների նկատմամբ ստորադաս դիրքի մեջ դնելու համար օսմանյան օրենքը բավականաչափ հետադիմական տրամադրություններ է սեփականել ֆրանսիական օրենքներից՝ որոշ դեպքերում ծայրահեղության հասցնելով դրանք։

40 «Մասիս», 19—26. XII. 1864։

41 А. Д. Желтяков, նշվ. աշխ., էջ 93։

42 «Ծաղիկ», 1865, № 109, էջ 376։

43 А. Д. Желтяков, նշվ. աշխ., էջ 93։

44 S, Mardin, The genesis of Young Ottoman thought, Princeton, 1962, p. 20, R. Davison, Reform in the Ottoman Empire, Princeton, 1963, p. 208.

բտկեց, այսպես կոչված, «Ալիի որոշումը», որով իշխանությունները դառնում էին մամուլի անսահմանափակ վերահսկողը։ Որոշման մեջ ղատապարավում էր կայսրության հիմքերը քայքայելուն ուղղված տեղական մամուլի մի մասի ձգտումը։ Նշվում էր, որ կառավարությունը դրա դեմ գործելու է վարչական կարգով և որ այդ կարգը կվերացվի, երբ վերացվեն դրանք ծնող պատճառները[45]։ Կայսրության հետագա պատմության ընթացքում 1864 թ. դեկտեմբերի 31-ի օրենքը փաստորեն փոխարինված է եղել այդ որոշմամբ, թեև այն երբեք չեղյալ չի հայտարարվել։ Մինչդեռ «Ալիի որոշումը» գործողության մեջ եղել է մինչև երիտթուրքական հեղափոխությունը (1908 թ.) և իրավական հիմք դարձել համիդյան դրաքննության ավերածությունների համար[46]։ 1860—1890-ական թվականներին պարբերականների խափանումներն ու հետապնդումները դրլխավորապես հենվել են այդ որոշման վրա։

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕЧАТЬ В НАЧАЛЬНЫЙ ПЕРИОД ОСМАНСКОЙ ЦЕНЗУРЫ (1840—60-ые годы)

АЛЬБЕРТ ХАРАТЯН

Резюме

В 1840—1860-ых годах контроль над западноармянской печатью в Турции осуществлялся местными властями и национальным управлением. Правовое положение печати не было урегулировано, хотя и существовали некоторые административно-цензурные правила. В Константинополе и Измире армянская печать подвергалась строгому контролю и неоднократно закрывалась в административном порядке. В случае надобности по отношению к ней применялась не только последующая, но и предварительная цензура. Цензура была особенно непримиримой по отношению к тем изданиям, которые отражали идеи, направленные против турецкой деспотии.

«Закон о печати» от 31 декабря 1864 г. не гарантировал права редакторов и издателей от произвола местных властей, он был узаконен постановлением от 6 марта 1867 г. После опубликования постановления возникли большие трудности в приобретении разрешения на армянские издания.

---

[45] G. Young, Corps de droit Ottoman, vol. 2, Oxford, 1905, p. 326.
[46] S. R.. Jskit, Türkiyede matbuat rejimleri, Ankara, 1938, s. 22—26.